

Պրոգրեսիվ հարկման գաղափարն առաջին անգամ ծագել է XVI-XVII դարերում Ֆլորենցիայում: Այն կիրառվել է գույքահարկի վրա՝ նպատակ ունենալով ծանրացնել հակաիշխանական սեփականատերերի հարկային բեռը: Ֆ. Էնգելսը գտնում էր, որ հարկ պետք է վերցնել այնտեղից, որտեղ ավելի շատ ավելցուկ կա¹: Այսօր պրոգրեսիվ հարկման մեխանիզմը կիրառվում է աշխարհի շատ երկրներում: Ընդհանրապես, ժամանակակից հարկային համակարգերը կիրառում են այս երկու մեխանիզմների փոխկապակցված տարբերակը՝ փորձելով հարկազանձումը կազմակերպել հնարավորինս արդար և արդյունավետ:

Միասնական հարկի տեսության հիմնական գաղափարն այն է, որ անհրաժեշտ է բոլոր հարկերը միավորել մեկ միասնական հարկի մեջ, որը, այս տեսության ներկայացուցիչների կարծիքով, կհեշտացնի հարկազանձման գործընթացը: Նրանք այն կարծիքին են, որ առավել նպատակահարմար է բազմաթիվ հարկատեսակների փոխարեն պարզ եղանակով կիրառել մեկ հարկատեսակ, որը կհեշտացնի հարկազանձումը և կշրջանցի տարբեր հարկադրույքների հետ կապված տարաձայնություններն ու դժգոհությունները: Սակայն միջազգային պրակտիկան ցույց է տալիս, որ սրանք ընդամենը դասագրքային գաղափարներ են, և նրանց կիրառությունը գրեթե անհնար է:

Հարկային ծանրության բաշխման տեսության հիմնական գաղափարը հարկման գործընթացի համաչափ կազմակերպումն է: Սա ենթադրում է այնպիսի սկզբունքների մշակում և իրագործում, որ օրենքի առաջ բոլոր քաղաքացիները կրեն հավասարաչափ պատասխանատվություն: Այս տեսության ներկայացուցիչները կարևորում են հարկավճարումնակության գաղափարը՝ կողմնակից լինելով հարկվող եկամտի նվազագույն շեմի սահմանմանը, որի նպատակը մարդկանց նվազագույն կենսական պահանջմունքները բավարարելն է:

Ընդհանրացնելով այս ամենը՝ կարելի է եզրակացնել, որ բոլոր ժամանակներում էլ արդիական են եղել հարկման հետ կապված խնդիրները: Հարկային տեսություններն ամրնդհատ փոփոխվել են՝ կախված տվյալ ժամանակաշրջանում հասարակական-քաղաքական իրավիճակից, տնտեսական հարաբերությունների զարգացման մակարդակից, ազգային ավանդույթներից:

ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀՊԱՀ ասպիրանտ

ՀՀ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԲԱՆԿԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

Միջազգային փորձը վկայում է, որ տարբեր երկրներում, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունում, առևտրային բանկերի վարկային պորտֆելի արդյունավետ կառավարումն ուղղակի կախվածության մեջ է գտնվում հաճախորդներից ներգրավվող դրամական և արտարժույթային միջոցներից (կամ այլ կերպ, ցպահանջ և ժամկետային պարտավորություններից), որոնք իրենց ուրույն տեղն ունեն վարկերի տրամադրման գործընթացում: Ընդհանուր առմամբ, առևտրային բանկերի ֆինանսական ռեսուրսները սեփական կապիտալի և պարտավորությունների ամբողջությունն է, որոնք գտնվում են բանկի տրամադրության տակ և օգտագործվում են ակտիվային գործառնությունների յուրահանգման համար:

Բանկերի պարտավորությունների հիմնական մասը կազմում են ավանդները, այսինքն՝ այն դրամական միջոցները, որոնք բնակչության և տնտեսավարող սուբյեկտների կողմից ներդրվում են առևտրային բանկերում:

¹ Пушкарёва В. "История финансовой мысли и политика налогов". Москва 1996г., стр. 99.

Ուստի այդ առումով պարտավորությունների արդյունավետ կառավարումն իր ազդեցությունն է թողնում յուրաքանչյուր բանկի իրացվելիության ու եկամտաբերության մակարդակի վրա, և այդ պատճառով էլ ֆինանսների կարգավորման գործընթացում խիստ կարևորվում է պարտավորությունների կառավարման խնդիրը, որի իրականացման համար դրանք կարելի է խմբավորել ըստ միջոցների ներգրավման ժամկետայնության, այդ թվում՝ ցպահանջի և ժամկետային¹:

Բանկերի ցպահանջ պարտավորությունները թղթակցային, հաշվարկային հաշիվներում առկա միջոցներն են, որոնք ենթակա են վերադարձման հաճախորդի առաջին իսկ պահանջի դեպքում: Կառավարման տեսանկյունից գնահատելիս ցպահանջ պարտավորությունները երկակի բնույթ ունեն: Մի կողմից ցպահանջ ներգրավված միջոցների դիմաց բանկը տոկոսներ չի վճարում կամ վճարում է շատ ցածր տոկոսադրույքով: Այսինքն՝ դրանք բանկի ակտիվների կազմավորման համար միջոցների ներգրավման ամենաէֆեկտիվ աղբյուրն են և գերադասելի են տվյալ բանկի համար:

Մյուս կողմից, ցպահանջ պարտավորությունները կարող են ժամանակի ցանկացած պահին պահանջվել հաճախորդի կողմից, և տվյալ պարագայում բանկը մշտապես պետք է պատրաստ լինի վճարելու այն, այսինքն՝ վերջնական արդյունքում ժամանակի ցանկացած պահին պետք է ապահովի վճարունակության (իրացվելիության) բավարար մակարդակ:

Առևտրային բանկերի ժամկետային պարտավորություններն, ի տարբերություն ցպահանջի, բավականաչափ ծախսատար են, և չնայած բանկը դրանց դիմաց տոկոսներ է վճարում, սակայն պարտավորությունների ժամկետայնության կառավարման տեսանկյունից այդպիսի պարտավորություններն առավել հեշտ կառավարելի են, քանի որ դրանց հետ պահանջի պայմանագրային ժամկետը նախօրոք ֆիքսված է: Երբեմն՝ հնարավոր է, որ ավանդը հաճախորդի կողմից ժամկետից շուտ հետ պահանջվի, և այդպիսի դեպքերում ռիսկի նվազեցման նպատակով երկկողմ համաձայնությամբ նախատեսվում է, որ պայմանագրով նախատեսված ժամկետից շուտ ավանդի հետ պահանջի ժամանակ հաճախորդը պարտավոր է տուգանք մուծել բանկին՝ օրենքով սահմանված կարգով: Չնայած տվյալ պարագայում, անկախ տուգանքների մուծումներից, տվյալ բանկի վարկային պորտֆելի ծավալները փոքրանում են, և արդյունքում սպասվելիք տոկոսային եկամուտները՝ նվազում:

Դասակարգելով բանկի պարտավորություններն ըստ ներգրավման աղբյուրների՝ կարելի է կատարել պարտավորությունների կառավարման գործընթացի գծով եզրահանգում՝ բանկի վարած քաղաքականության, շուկայում որպես ֆինանսական միջնորդի նրա կայացման, տնտեսության ակտիվության, բանկի իրացվելիության վերաբերյալ: Միաժամանակ, եթե բանկի պարտավորությունների կազմում գերակշռում են բանկերից ներգրավված միջոցները, ապա կարելի է եզրակացնել, որ բանկը կանգնած է լուրջ հիմնախնդիրների առջև՝ կապված հիմնական ավանդատուների թվաքանակի նվազման հետ: Եթե բանկը դիմել է ավանդների ներգրավման միջբանկային շուկային, ուրեմն նա, որպես «տնտեսությունում ազատ միջոցներ ներգրավող», չի կայացել, այլ կերպ ասած բանկն ի գործ է տնտեսավարող սուբյեկտներից միջոցներ ներգրավել և նախընտրել է ռեսուրսների ներգրավման առավել թանկ՝ միջբանկային շուկան: Բնական է, բանկն առանց դրդապատճառի չէր նախընտրի միջբանկային թանկ ֆինանսական միջոցների ներգրավման նման ուղին, այն ստիպողական քայլ է, քանի որ կանգնած է վճարունակության դժվար հիմնախնդրի առջև՝ հետագա սնանկացումից խուսափելու համար:

Եթե բանկի պարտավորությունների կազմում գերակշռում են բնակչությունից և տնտեսավարող սուբյեկտներից ներգրավված ավանդային միջոցները, ապա կարելի է գալ այն հետևություն, որ բանկը կարողացել է ստանձնել «հաճախորդներից ազատ միջոցներ ներգրավողի» իր վստահության գործառույթը: Այդ միջոցների ծավալը վկայում է տնտեսության գործարար ակտի-

¹ Банковское дело. Под ред. Проф. О.И. Лаврушина. М., 2003, с. 86.

վորյան, խնայողությունների մակարդակի, բանկերի նկատմամբ բնակչության վստահության մասին:

Պարտավորությունների կառավարման տեսանկյունից առավել ռիսկային են ոչ ռեզիդենտներից ներգրավված միջոցները, քանի որ տվյալ պարագայում օտարերկրացին, հաշվի առնելով ավելի շատ եկամուտ ապահովող գործոնների ազդեցությունը, միայն այդ դեպքում կարող է ներդնել իր ֆինանսական միջոցները ոչ թե իր երկրի, այլ որևէ այլ երկրի բանկային համակարգ:

Բանկի կողմից միջոցների ներգրավման ծավալների վրա առավելագույնս ազդում են արտաքին գործոնները, այդ թվում՝ տնտեսության գործարար ակտիվության աճի տեմպը, տվյալ տարածաշրջանի զարգացման աստիճանը, ներդրումների այլընտրանքային հնարավորությունները և սղաճային սպասումները:

Ակնհայտ է, որ ներգրավման հնարավորությունները կտրուկ աճում են արտադրության աճի պայմաններում, իսկ տնտեսական ճգնաժամի, բարձր սղաճային սպասումների պայմաններում բարձրանում է սպառողական ապրանքների և իրական ակտիվների՝ անշարժ գույքի, բանկարժեք քարերի և մետաղների պահանջարկը: Բացի դրանից, սղաճի պայմաններում, որն ուղեկցվում է տնտեսական աճի անկմամբ, իրական տոկոսադրույքը (հաշվի առած սղաճի ազդեցությունը) սովորաբար դրական չէ:

Բանկի պարտավորությունների կառավարումը կարելի է իրականացնել հիմնականում երկու ուղիներով, այդ թվում՝ փոքրածավալ միջոցների՝ ներգրավման և «խոշոր» հաճախորդներից միջոցների ներգրավման: Հաճախորդներից փոքրածավալ միջոցների ներգրավումը պոտենցիալ ռիսկ չի պարունակում, սակայն աշխատատար է, քանի որ բանկը պետք է ընդլայնի իր հաճախորդների ոլորտը և հնարավորինս կարողանա փոքրածավալ միջոցներ ներգրավել ավելի շատ հաճախորդներից:

«Խոշոր» հաճախորդներից միջոցներ ներգրավելիս մեծանում է իրացվելիության ռիսկը, այսինքն՝ բանկի կախվածությունը տվյալ հաճախորդից, և հավանականությունն այն բանի, որ հաճախորդի անժամկետ պահանջի դեպքում բանկն ի վիճակի չի լինի մարել իր պարտավորությունները: Այս դեպքում բանկը մշտապես պետք է փնտրի միջոցների ներգրավման այլընտրանքային աղբյուրներ, քանի որ «խոշոր» հաճախորդի կորուստը կարող է ճակատագրական լինել բանկի համար, ի տարբերություն առաջին դեպքի, երբ «փոքր» հաճախորդի կորուստը բանկի վարկային պորտֆելի վրա էական ազդեցություն չի ունենա:

Պարտավորությունների կառավարման բնագավառում կարևոր նշանակություն ունի շուկայում բանկային ծառայությունների առաջարկի վերլուծությունը, ինչը բանկին օգտակար տեղեկատվություն կտա այլ բանկերի կողմից միջոցների ներգրավման պայմանների մասին: Այս առումով բանկն առավել մրցունակ կհամարվի, եթե կարողանա առաջարկել ավանդների ներգրավման առավել շահավետ պայմաններ, շուկայում մատուցել նոր ֆինանսական ծառայություններ, սպասարկման առավել բարձր մակարդակ:

Միջոցների ներգրավման կարևորագույն եղանակ է նաև բանկի կողմից արժեթղթերի՝ մուրհակների, ավանդային սերտիֆիկատների թողարկումը, ինչը հայաստանյան շուկայում լայն տարածում չունի և իրականացվում է մեկ-երկու բանկի կողմից, հիմնականում պայմանավորված արժեթղթերի շուկայի դեռևս թույլ զարգացմամբ:

ՀՀ առևտրային բանկերի պարտավորությունների կառավարման էությունն ավելի պարզ պատկերացնելու համար ներկայացնենք 2003-2007թթ. տվյալներով 22 բանկերի պարտավորությունների տեսակարար կշիռը (տե՛ս աղյուսակ 1)¹:

¹ ՀՀ Կենտրոնական բանկի տարեկան հաշվետվությունները (2003-2007թթ.):

ՀՀ առևտրային բանկերի պարտավորությունների կառուցվածքը ակտիվներում (2003-2007թթ.)

No	Բանկերի անվանումները	առ. 31.12.2003թ.		առ. 31.12.2004թ.		առ. 31.12.2005թ.		առ. 31.12.2006թ.		առ. 31.12.2007թ.	
		Գումարը հազ. դրամ	Տես. կշ. ակտիվ. %	Գումարը հազ. դրամ	Տես. կշ. ակտիվ. %	Գումարը հազ. դրամ	Տես. կշ. ակտիվ. %	Գումարը հազ. դրամ	Տես. կշ. ակտիվ. %	Գումարը հազ. դրամ	Տես. կշ. ակտիվ. %
1	«Ամելիք բանկ»	12,261,561	84.3	14,735,346	82.4	20,039,173	83.2	24,779,357	83.7	26,703,142	83.1
2	«ԻՏԲ» բանկ (ԲԻԲԼՈՍ բանկ)	1,158,622	27.9	1,876,722	37.8	2,169,466	41.4	2,525,059	45.5	2,896,816	49.3
3	«Առևտրային բանկ»	6,095,382	76.5	7,585,864	70.5	11,399,318	79.7	10,471,280	76.7	17,309,755	83.1
4	«Ինտերբանկ»	6,205,274	75.7	8,384,433	74.0	12,830,329	76.4	16,313,472	72.7	29,000,929	81.0
5	«Հայմենքարտբանկ»	11,206,348	81.9	10,120,410	77.8	9,193,642	74.0	7,909,464	70.0	10,126,720	74.6
6	«Հայգրուդիոբանկ» («ԱԿԲԱ- կրեդիտ ագրիկուլ բանկ»)	12,251,319	69.3	18,356,229	75.2	28,247,539	79.7	34,504,828	65.4	59,047,947	73.5
7	«Արցախբանկ»	11,105,233	84.8	21,800,894	89.4	21,089,151	86.0	18,918,854	82.7	17,768,708	79.6
8	«Հումակառ բանկ» («Կասկադ բանկ»)	4,389,126	76.9	4,496,476	76.7	2,640,055	36.6	4,126,623	46.9	6,003,831	54.7
9	«Հայխանաբանկ» («ՎՏԲ- Հայաստան բանկ»)	20,601,501	88.5	36,320,761	91.0	32,702,990	78.9	36,315,734	79.6	49,389,913	70.5
10	«Զարգացման հայկական բանկ» ԲԲԸ	9,036,484	80.1	8,082,679	73.3	5,353,308	64.8	5,465,353	59.1	9,264,642	66.3
11	«Յուրբանկ»	10,749,388	78.3	10,100,202	77.2	16,169,330	83.4	27,189,606	87.8	38,592,078	84.6
12	«Պրոմբեքբանկ»	1,841,082	38.9	3,095,273	48.8	2,922,599	43.2	4,206,331	49.2	5,238,514	39.1
13	«Հայինվեստբանկ» («Հայբիզնեսբանկ»)	7,692,195	84.9	4,540,960	76.8	6,886,730	72.8	13,889,969	83.6	27,070,634	81.6
14	«Մելլաք բանկ»	4,438,485	74.3	7,393,891	79.5	5,645,837	65.6	5,656,760	60.4	7,367,242	65.3
15	«Կոմկետր բանկ»	21,878,682	86.6	27,065,697	81.8	32,715,755	78.4	25,962,073	73.0	47,791,721	81.3
16	«Էյ-Էս-Բի-Սի բանկ»	62,405,261	92.8	61,211,471	91.8	64,868,682	91.1	72,988,668	91.0	93,835,619	89.8
17	«Հայէկոմոբանկ»	15,882,368	84.0	23,516,732	85.6	29,199,006	84.0	37,071,369	84.3	41,949,571	83.2
18	«Միջինկառ բանկ» («ԲՏՄ ինվեստբանկ»)	345,802	22.1	206,338	15.5	2,249,430	42.5	6,312,249	66.0	12,510,605	70.0
19	«Արտշինկոնստրուկցիոն բանկ»	17,668,240	82.9	32,818,353	85.8	45,451,148	83.7	58,054,806	54.0	75,280,269	80.2
20	«Արմալիտբանկ»					3,034,316	50.9	6,715,042	68.7	17,744,440	81.9
21	«Արարատ բանկ»					1,495,162	37.7	4,708,119	55.1	23,144,890	83.4
22	«Պրոկրեդիտ բանկ»									884,664	13.2
	Ընդամենը	237,212,353	-	301,708,731	-	356,302,966	-	424,085,016	-	618,922,650	-

Աղյուսակ 2

ՀՀ առևտրային բանկերի ընդհանուր պարտավորություններում հաճախորդներից մեծագույնը հավանական է 2003-2007թթ.)

No	Բանկերի անվանումները	առ.31.12.2003թ.			առ.31.12.2004թ.			առ.31.12.2005թ.			առ.31.12.2006թ.			առ.31.12.2007թ.		
		Ընդամենը պարտավորություններ հազ.դրամ	այդ բնում		Ընդամենը պարտավորություններ հազ.դրամ	այդ բնում		Ընդամենը պարտավորություններ հազ.դրամ	այդ բնում		Ընդամենը պարտավորություններ հազ.դրամ	այդ բնում		Ընդամենը պարտավորություններ հազ.դրամ	այդ բնում	
			Հաճ. մեղք. ավանդ. հազ.դրամ	Տես. կշ. %		Հաճ. մեղք. ավանդ. հազ.դրամ	Տես. կշ. %		Հաճ. մեղք. ավանդ. հազ.դրամ	Տես. կշ. %		Հաճ. մեղք. ավանդ. հազ.դրամ	Տես. կշ. %		Հաճ. մեղք. ավանդ. հազ.դրամ	Տես. կշ. %
1	«Ամբիոն բանկ»	12,261,561	3,706,306	30.2	14,735,346	7,641,904	51.9	20,039,173	10,728,589	53.5	24,779,357	12,533,875	50.6	26,703,142	12,677,598	47.5
2	«ԲՏԲ» բանկ (ԲԻԲԼՍ բանկ)	1,158,622	164,565	4.2	1,876,722	1,157,876	61.7	2,169,466	1,181,752	54.5	2,525,059	1,947,395	77.1	2,896,816	1,958,948	67.6
3	«Մոնթեբանկ»	6,095,382	2,063,600	3.9	7,585,864	6,811,169	89.8	11,399,318	10,229,658	89.7	10,471,280	9,198,534	87.8	17,309,755	5,858,219	91.6
4	«Բանկար»	6,205,274	3,361,048	4.2	8,384,433	5,841,448	69.7	12,830,329	8,997,451	70.1	16,313,472	9,218,750	56.5	29,000,929	4,152,385	48.8
5	«Հայմեդարտ բանկ»	11,206,348	4,120,610	6.8	10,120,410	7,135,694	70.5	9,193,642	6,011,773	65.4	7,909,464	5,701,104	72.1	10,126,720	8,888,040	87.8
6	«Հայպոլիտի բանկ» («ԱԶԲԼ-կրեդիտ ագրիկուլ բանկ»)	12,251,319	1,361,285	11.1	18,356,229	5,859,526	31.9	28,247,539	10,776,530	38.2	34,504,828	14,507,908	42.0	59,047,947	21,574,686	36.5
7	«Արցախբանկ»	11,105,233	3,816,365	34.4	21,800,894	5,323,835	24.4	21,089,151	10,384,087	49.2	18,918,854	10,332,294	54.6	17,768,708	9,934,503	55.9
8	«Հունական բանկ» («Հասկադ բանկ»)	4,389,126	467,617	0.7	4,496,476	1,941,262	43.2	2,640,055	2,259,362	85.6	4,126,623	3,403,322	82.5	6,003,831	4,724,153	78.7
9	«Հայֆանաբանկ» («ՀՏԲ-Հայաստան բանկ»)	20,601,501	12,406,607	60.2	36,320,761	28,365,120	78.1	32,702,990	25,372,254	77.6	36,315,734	24,310,693	66.9	49,389,913	27,047,975	54.8
10	«Ջարգացան հայկական բանկ» ԲԲԸ	9,036,484	6,200,875	68.6	8,082,679	7,004,967	86.7	5,353,308	3,998,345	74.7	5,465,353	4,800,532	87.8	9,264,642	6,150,873	66.4
11	«Յունիբանկ»	10,749,388	6,498,773	60.5	10,100,202	8,385,605	83.0	16,169,330	14,870,305	92.0	27,189,606	24,486,526	90.1	38,592,078	5,600,816	92.2
12	«Դրամբանկ»	1,841,082	415,139	22.5	3,095,273	2,802,088	90.5	2,922,599	2,470,504	84.5	4,206,331	3,788,284	90.1	5,238,514	4,317,792	82.4
13	«Հայֆանաբանկ» («Հայֆանաբանկ»)	7,692,195	1,474,455	19.2	4,540,960	3,472,001	76.5	6,886,730	2,713,505	39.4	13,889,969	5,067,209	36.5	27,070,634	17,180,250	63.5
14	«Մեյրապ բանկ»	4,438,485	2,074,245	46.7	7,393,891	5,595,434	75.7	5,645,837	3,682,811	65.2	5,656,760	3,267,866	57.8	7,367,242	2,679,746	36.4
15	«Կոմերտ բանկ»	21,878,682	6,029,292	27.6	27,065,697	6,090,569	59.5	32,715,755	24,639,037	75.3	25,962,073	20,554,953	79.2	47,791,721	9,143,061	81.9
16	«Է-Էս-Բի-Մի բանկ»	62,405,261	8,492,108	13.6	61,211,471	57,298,336	93.6	64,868,682	60,812,358	93.7	72,988,668	66,404,180	91.0	93,835,619	7,460,310	82.5
17	«Հայկեմոնթրանկ»	15,882,368	5,882,026	37.0	23,516,732	17,083,456	72.6	29,199,006	19,672,612	67.4	37,071,369	23,438,754	63.2	41,949,571	20,803,292	49.6
18	«Միջինասիական բանկ»	345,802	173,380	0.1	206,338	194,213	94.1	2,249,430	435,851	19.4	6,312,249	711,953	11.3	12,510,605	3,786,573	30.3
19	«Արշակունյաց բանկ»	17,668,240	8,470,300	47.9	32,818,353	6,033,278	79.3	45,451,148	41,246,700	90.7	58,054,806	53,934,245	92.9	75,280,269	8,686,269	78.0
20	«Արմավիսբանկ»							3,034,316	911,787	30.0	6,715,042	1,596,909	23.8	17,744,440	6,918,849	39.0
21	«Արարատ բանկ»							1,495,162	1,336,526	89.4	4,708,119	2,965,371	63.0	23,144,890	1,151,624	48.2
22	«Դրամբանկ»													884,664		
	Ընդամենը	237,212,353	77,178,596	32.5	01,708,731	214,037,781	70.9	356,302,966	262,731,797	73.7	424,085,016	302,170,657	71.3	618,922,650	400,695,962	64.7

Կատարված հաշվարկներից պարզվում է, որ թիվ 1 աղյուսակում բերված հաշվարկային տվյալներով, ըստ տարիների, պարտավորությունների ամենամեծ տեսակարար կշիռը «ԷՆՂ-Էս-Բի-Սի» բանկում է, որը 2007թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 89.8%, չնայած նախորդ տարիների համեմատ ունեցել է նվազման միտում: Այնուհետև, բավականաչափ մեծ տեսակարար կշիռ են ունեցել նաև համապատասխանաբար՝ Յունիբանկը, Հայէկոնոմբանկը, Անելիք բանկը, Առեկսիմբանկը, Արմավիսբանկը, Արդշինհիմվեստ բանկը և Կոնվերս բանկը: Ընդհանուր պարտավորություններում ներառվում են¹.

1. ՀՀ Կենտրոնական բանկի նկատմամբ պարտավորությունները,
2. Այլ բանկերի նկատմամբ պարտավորությունները,
3. Դրամական շուկայից ստացված այլ փոխառություններ,
4. Հաճախորդներից ներգրավված ավանդները,
5. ՀՀ կառավարության նկատմամբ պարտավորությունները,
6. Հետաձգված հարկային պարտավորությունները և այլն:

Վերոնշյալների կազմում և կառուցվածքում նաև իրենց ուրույն տեղն ունեն տարբեր հաճախորդներից ներգրավված ավանդները:

Հետևաբար, վերջինիս կարևորությունը բացահայտելու նպատակով աղյուսակի տեսքով ներկայացնենք ընդհանուր պարտավորությունների կազմում հաճախորդներից ներգրավված ավանդների տեսակարար կշիռը՝ ՀՀ առևտրային բանկերի օրինակով ըստ 2003-2007 թթ. տվյալների (տե՛ս աղյուսակ 2)²:

Աղյուսակի տվյալներից պարզվում է, որ ըստ տարիների, սկսած 2003թ.-ից, յուրաքանչյուր առևտրային բանկի ընդհանուր պարտավորություններում հաճախորդներից ներգրավված ավանդների տեսակարար կշիռն ունի խիստ տատանողական բնույթ: Հատկապես այն բանկերը, որոնք ունեն ավելի շատ հաճախորդներ և ներգրավված ավանդային գումարներ, գտնվում են նպաստավոր պայմաններում և ունեն բավականաչափ մեծ վարկային պորտֆել: Ուստի ըստ 2-րդ աղյուսակի տվյալների երևում է, որ միայն 2007թ. վերջի դրությամբ առևտրային բանկերից, հաճախորդներից ներգրավված ավանդների ամենամեծ տեսակարար կշիռը «Յունիբանկ» ՓԲԸ-ինն է՝ 92.2% և «Առեկսիմբանկ» ՓԲԸ-ինը՝ 91.6%:

Այստեղից հետևություն, որ ինչպես մեր կողմից իրականացվող հաշվարկները, այնպես էլ միջազգային փորձը վկայում են, որ այն բանկերը, որոնք արդյունավետ են իրականացնում տարբեր աղբյուրներից ներգրավվող ավանդների արդյունավետ կառավարումը, այնքան տվյալ բանկը ապահովված կլինի վարկային պորտֆելով և դրան տրամադրվող վարկերի գծով տոկոսային եկամուտներով:

¹ «Բանկային գործ», Բ. Ասատրյանի խմբագրությամբ, Երևան, 2004, էջ 264-268:

² ՀՀ Կենտրոնական բանկի տարեկան հաշվետվություններ (2003-2007թթ.):